

Զ Ա Տ Ի Կ

Ա Լ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ծ Ա Տ Ո Ւ Ի Ր Ե Ա Ն Ի

I

Օ', ինչ պքանչելի, վսեմ տեսարան.
Ահա Աստուծոյ սուրբ օթևանում
Խուռն բազմութիւն ծնկաշոք, անձայն,
Կարծես մարմնացած մի ջերմ զգացում,
Լուռ աղօթում է... և վառ յոյսերով
Հայեացքը յառած դէպի սուրբ սեղան՝
Նա սպասում է անհամբեր սրառվ
Լսել մեծազօր ձայնը աւետման—
Թէ յարեաւ այսօր Փրկիչ-Նահատակ,
Մահւան կուռ շղթան նա խորտակելով,
Յարեաւ—ազատ կեանք, Սիրոյ յաղթանակ
Եւր յարութեամբը մեղ պարգևելով:

II

Եւ սրբավայրի օրհնեալ յարկի տակ
Վեր են առաքւում Բարձրեալի անւան
Անհուն օրհնութիւն. հնչում ներդաշնակ
Հոգեբուղիս տաղեր փառաբանութեան:
Վառւում են մոմեր սուրբերի առաջ,
Ծխում է անոց խունկը բուրգառում,
Եւ այդ սրբազան պատկերն ակնահաճ
Միտք է կախարդում, սիրո հրապուրում...

Եւ ինչպէս խաղաղ, ինչպէս սիրառատ՝
Աստուծոյ տան մէջ գլուխ են խոնարհած
Հզօրն ու անզօրն, հարուստն ու աղքատ,
Ոխ ու թշնամանք սրտերից հանած...

III

Եւ չը կան այստեղ ոչ աղի արցունք,
Ոչ հեգնւսած սրտի անզօր փոթորիկ...
Ոչ բոնի գործեր, տմարդի վարժունք,
Ոչ առօրէական կրքեր ու չարիք...
Այստեղ էլ մարդիկ կեղծ մտերմութեամբ
Չեն լարում դարան իրար ոտքի տակ,
Չեն ատում իրար կոյր ատելութեամբ,
Անպարտի գլխին չէ շողում դանակ...
Հաշտութեան հրեշտակն իջած սուրբ Տաճար
Մարդկանց մէջ, ասես, շըջում է անտես.
Այստեղ ամենքն էլ եղբայր են իրար.
Օ՛, այստեղ կեանքն է—մե՛ծ Սիրոյ հանդէս...

IV

Կայում եմ ես լուռ... Եւ հազար մաքեր—
Ուրախ ու տխուր, պայծառ ու մթին—
Որպէս անհանդիստ ծովի ալիքներ,
Ինձ սպաշարում են այդ վսեմ ժամին...
Ես մտածում եմ—դեռ քանի արիւն,
Քանի արտասուք աշխարհիս վերայ
Պէտք է ծովանան—մինչ Սիրոյ գարուն
Մարդկացին կեանքում յաւերժ կը եռայ...
Ես մտածում եմ—դեռ քանի, քանի
Փրկչաւանդ սիրով բորբոքւած հոգիք
Պէտք է զոհ գնան լոյս-գաղափարի,
Մինչ կը պատրաստեն մեզ մի նոր Զատիկ...